Տիլիֆ գեղջ զԹովմասն Տ. Բարգուղիմէոսեան ի քահանայ ժողովրդեան գեղջն։ Թ. 265։

— Յանուն վիճ. Աստենին Երևանայ, որով պատուիրեցաւ վասն ըմբոստութեան Տ. Գրիգոր ա. քահանայի Սուքիասեան՝ դադարեցուցանել զնա ի քահանայագործութենէ։ Թ. 284։

— Յանուն Փոխ թեմակալին Երևանայ Տ. Կարապետ վարդապետի, որով պատուիրեցաւ թոյլ տալ դադարեցուցեալ Գրիգոր ա. քհնյի. Սուքիասեան պաշտել զքահանայութիւն իւր ի տոնական աւուրս՝ յետ խնդրելոյ նորա զներողութիւն ի Փոխանորդէն հրապարակաւ։

Բ.

Հայրապետական շնորհակալիք եւ օրհնութիւնք։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն Առաջնորդին և ժողովրդեան հայոց Ամերիկայի, վասն յղեալ 9765 բուբլի գումարին։ Թ. 283։

ԳԼԳԻԿԱԾՔ ԱՆՑՅԱԼ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մարտի 1-ին Սինոդը լսեց Աղէքսանդրապոլ քաղաքի Ծխատէր կարգընկէց Մկրտիչ քհնյ. Գասպարեանցի խնդիրն ու Վեհափառ Հայրապետի մակագրութիւնը և որոշեց դիմել Երևանի տէր Նահանգապետին և հարց տալ, արդեօք մարմնաւոր իշխանութեան կողմից արգելք չկայ յիշեալին կրկին վերադարձնելու քահանայական կարգը։

Նոյն թուին Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի յայտարարութիւնը Ղարահամզալու գիւղի եկեղեցու շինութեան մասին և որոշեց ուղարկել Ղարահամզալու գիւղի ս. Աստուածածին եկեղեցու յատակագիծը ա. Կառավար-

չապետին, բարձրագոյն թույլատրութիւն հայցելու յիշեալ եկեղեցու շինութեան համար։

Նոյն թուին լսեց Ներքին Գործոց նախարարի գրութիւնն, որով յայտնում էր Եալտա քաղաքի եկեղեցու շինութեան համար տրուած Բարձրագոյն թոյլատրութիւնը և որոշեց ուղարկել եկեղեցու յատակագիծը Բեսարաբիայի Կոնսիստորիային օր առաջ շինութեան գործին ձեռնարկելու։

Սինոդը լսեց Շուշեցի Բարաջան բէկ Աբրահամ Բէկեանցի խնդիրը Գարեգին քհնյ. Յովհաննիսեանի ապօրինի վարմունքի դէմ և հրամայեց Տաթևի Փոխանորդ Տ. Ներսէս վարդապետին գնալ Շուշի, կատարել օրինաւոր քննութիւն և գործը մատուցանել ի պարտ ու պատշաճ տնօրէնութիւն։

Մարտի 3-ին Սինոդը լսեց Բեսարաբայի Կոնսիստորիայի յայտարարութիւնը, որով վերջինս հրահանգութիւն է խնդրում հոգևորականներին և նրանց ընտանիքի անդամներին անցագիր տալու դէպքում գրոշմանիշ պահանջելու մասին, որովհետև միշտ պահանջուել է վերջիններից երկու 60 կոպէկանոց մարկա. Հրամայեցին յայտնել Բեսարաբիայի Կոնսիստորիային, որ համաձայն 3 կէտի 75 յօդուածոյ Уставъ "О Гербовомъ сборѣ„ հոգևորականներից ոչինչ չը պէտք է պահանջել և նրանք ազատ են այդ տուրքից։

Նոյն թուին Սինոդը լսեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիայի յայտարարութիւնը, որով վերջինս հարցնում է, թէ ինչպէս արձանագրել այն զաւակների մկրտութիւնը, որոնք ծնուած են կաթոլիկ կամ բողոքական եկեղեցում պսակուած հայ մերձաւոր ազգականներից, երբ պսակուածները ցանկանում են, որ իրենց զաւակները Լուսաւորչական լինին։ Սինոդը որոշեց. որովհետև Հայաստանեայց եկեղեցին վաւերական է համարում հայ կաթոլիկաց և բողոքականների եկեղեցում կատարուած պսակը, և պսակածներին ընդունում է իւր

ծոցը, ուստի այդպիսի ամուսնութիւնից ծնուած զաւակներին ճանաչել օրինաւոր և այդպէս էլ արձանագրել։

Սինոդը լսեց Կարսի Հոգ. Կառավարութեան յայտարարութիւնը, որով խնդրում էր թոյլատրել իրեն, որ հանգանակութիւն բանայ Կաղզուանի մօտ գտնուած Վարդիներ ուխտատեղու ճանապարհի շինութեան և եկեղեցու նորոգութեան համար, և որոշեց մերժել հոգևոր կառավարութեան միջնորդութիւնն ու յայտնել այս մասին որոնց պէտքն է։

Նոյն թուին Սինոդը լսեց Երևանի նահանգական դատարանի սեսիայի գրութիւնը, որով վերջինս հարցնում էր՝ թէ վեցերորդ ասաֆճանի աղգակցական ամուսնութիւնը ճանաչւում է արդեօք օրինաւոր և Վեհափառ Հայրապետի 1902 թուի յունվարի 4 ին տուած կոնդակը տարածւում է դոշանից առաջ եղած պսակների վրայ թէ ոչ։ Սինոդը բացատրեց, որ վեցերորդ ասաֆճանի աղգակցական պսակն համարւում է անթոյլատրելի, բայց պսակի խորհուրդը կատարելուց յետոյ չի ճանաչւում անվաւեր, միայն պսակող քահանան ենթարկւում է պատասխանատուութեան և ապաշխարութեան դատապարտւում $1^1/_2$ տարով։

Սինոդը լսեց Գանձակի Փոխանորդի յանուն Վեհափառ Հայրապետի մատուցած յայտարարութիւնը, որով խնդրում էր թոյլատրել իրեն, որ գանձանակի փոխարէն քահանայք վարձատրուին եկեղեցական եկամուտներից։ Հրամայեցին մերժել յիշեալ միջնորդութիւնն և յայտնել քահանայից, որ նրանք պէտք է բաւականանան ժողովրդական տուրքերով՝ նախնաւանդ սովորութեան համեմատ։

Նոյն թուին Սինոդը լսեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիայի 1899 թուի դեկտեմբերի 1 ին մատուցած յայտարարութիւնը Թելաւի գործակալ Տէր Դէորգի կատարած բազմաթիւ քրէական զեղծումների մասին, ինչ-

պէս և նոյն տեղացի Տէր Աբել քհնայի հաւատարմատար Դէորգ Սուքիասեանի բողոքը Սինոդի պրոկուրորի անուամբ, ապա կրկին Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիայի անցեալ տարուայ Նոյեմբերի 3 ին մատուցած թ. 4816 յայտարարութիւնը, որով յայտնում էր, թէ Տէր Աբել և Տէր Դէորգ քահանաներն հաշտուել են և խնդրում են կարճել յիշեալ գործը (յանցանքներ են կատարուած եկեղեցական խորհուրդների դէմ. եկեղեցական և դպրոցական դրամներ սեփականելու, եկեղեցական իրաւանց և իշխանութեան դէմ, որի անունով յիշեալ Տէր Դէորգը մեղադրւում է կաշառակերութեան մէջ)։ Սինոդը որոշեց. որովհետև պաշտօնատար մարդկանց պաշտօնավարութեան ժամանակ կատարած զեղծումների գործը չի կարող որևէ կողմերի հաշտութեամբ վերջանալ, ուստի աւելորդ գրագրութեան տեղիք տալու համար Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիային յանդիմանել. և պատուիրել, որ ճշտութեամբ կատարի Սինոդի անցեալ տարուայ Օգոստոսի 27 ին արձակած թ. 816 հրամանը՝ շուտով լրացուցիչ քննութիւն կատարելու մասին։

Նոյն թուին Սինոդը լսեց Կարսի նահանգի Զուչի գիւղի բնակիչ Մարգար Յարոյեանի ամուսնալուծութեան մասին Երևանի Կոնսիստորիայի մատուցած յայտարարութիւնը և ի նկատի ունենալով, որ թէ մարդը և թէ կինը դրժել են ամուսնական հաւատարմութեան ուխտը և ապօրինի կենակցել այլևայլ անձանց հետ, մերժեց նրանց ամուսնալուծութեան վերաբերեալ խնդիրը։

Մարտի 5 ին Սինոդը լսեց Տ. Կառավարչապետի դրութիւնը, որով յայտնում էր, թէ Թագաւոր Կայսրն ամենաողորմածաբար թոյլատրել է գնել Շամախու առաջնորդարանի և կոնսիստորիայի համար Նիկոլայ և Աղէքսանդր Թասալեանների տունը 7000 ռուբլի գումարով և որոշեց վերոյիշեալ Բարձրագոյն թոյլտութեան մասին յայտնել Շամախու Կոնսիստորիային։

Սինոդը լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի միջնորդությունը և Հաղթաղ գիւղի ժողովրդեան խնդիրը, որոնցից առաջինը միջնորդում էր քահանայացնել Գրիգոր Դասպարեանին Հաղթաղ գիւղի վերայ, իսկ երկրորդները մերժում էին և ցոյց տալիս, որ առաւել արժանաւոր քահանայացուներ կան Կուսապատ գիւղում, որոնց և կարելի է քահանայութեան հրաւիրել, խնդրում էին մերժել յիշեալ միջնորդութիւնը, որոշեց. մերժելով Գրիգոր Տէր Դասպարեանի ձեռնադրութեան մասին Ղարաբաղի Կոնսիստորիայի միջնորդութիւնը, համաձայն Սինոդի պ. պրոկուրորի պահանջի խնդրել Դանձակի պ. Նահանգապետից, որ հրամայի քննութիւն կատարել Կուսապատ գիւղի քահանաների խնդրանաց համաձայն, որոնք յայտնել էին, որ Գրիգոր Յակոբեան Դասպարեանը կաշառել է թէ տանուտէր Միրզա Զախարբէկեանին, որը վաւերացրել է Գրիգորի համախոհականը. և թէ կոնսիստորիայի ծառայողներին, որոնց անունները քահանայք չեն յիշել իրենց խնդրագրի մէջ։

Մարտի 8 ին որոշեց լուծել Թիֆլիզեցի ճարտարապետ Նիկողայոս Լալայեանի և Ովսաննա Բէբուրեանի պսակը և իրաւունք տուեց Նիկողայոս Լալայեանին նորից ամուսնանալու։

Նոյն թուին լսեց Երևանի Կոնսիստորիայի յայտարարութիւնը և հրամայեց վաւերական համարել Յարութիւն Յովհաննիսեան Ա.հարոնեանի, Սարգիս Հախեանի և Համբարձում Սահակեանի պսակը և արձանագրել չափաբերական մատեանում։

Նոյն թուին լսեց Դանձակի նահանգի Ղարաբլիսա գիւղի ծխատէր Համբարձում Տէր Պողոսեանի զեղծումների գործը, որ նա Ռուստամբէկ Սաֆրազբէկեանի և Վարդիվալ Սաեփանեանի ապօրինի կենակցութիւնից ծնուած երկու զաւակներին, դիտակցաբար զեղծում գործելով, մուծել է իբրև օրինաւոր ամուսնութիւնից ծնուած, որոշեց այս մասին յայտնել Դանձակի նահանգական դատարանին,

որ յիշեալ քահանան ենթարկուի պատասխանատուութեան՝ պատժական օրինաց 362 յօդ. և 1441 յօդուածի երկրորդ կէտի համաձայն, մարմնաւոր դատարանի միջոցաւ։

Մարտի 10 ին լսեց Եւդինէ Տէր Գէորգեան Թաղիանոսեանի խնդիրը, որով նկարագրում էր իւր ամուսին Արտաշէս Տէր Աբրահամեանի անհաւատարիմ և անհոգ վերաբերմունքը դէպի իրենց ամուսնական պարտականութիւնը և խնդրում լուծել իրենց ամուսնութիւնն, և իրաւունք տալ իրեն նորից մարդու գնալու, այս մեղադրանքը կանոնաւոր քննութիւնից յետոյ Սինոդը գտաւ օրինաւոր և հրամայեց լուծել յիշեալ պսակը և իրաւունք տալ Եւդինէ Թաղիանոսեանին նորից ամուսնանալու։

Մարտի 15 ին Սինոդը լսեց Նուխու գաւառի Վարդաշէն գիւղի բնակիչների Յանուն Վ. Հ. մատուցած խնդիրը Ս. Եղիշէի ուխտատեղոյ վերաբերութեամբ, որտեղ բազմիցս վէճեր են պատահել վրացի քահանայի և հայ հոգևորականութեան մէջ այդ ուխտատեղոյ և նրա արդեանց սեփականութեան մասին. և Վեհափառ Հայրապետի մակագրութիւնն՝ օր առաջ այդ խնդիրը կարգադրելու, որովհետև մօտենում է ուխտի օրը, որը տեղի ունի սովորաբար զատկի մեռելոցին։ Հրամայեցին ի լրումն Սինոդի 1902 թուի թ. 1183 գրութեան, խնդրել Գանձակի պ. նահանգապետից, որ օրինաւոր միջոցների ձեռնարկուի այն անկարգութիւնների առաջն առնելու, որոնք կարող են ծագել յունադաւան ենդիլոյիների և հայոց մէջ՝ ուխտի օրը և արիւնհեղութեան պատճառ դառնալ։

15 ին Սինոդը լսեց Երևանի կոնսիստորիայի յայտարարութիւնը 1902 թ. մայիսի 2 ից, որով Օշական գիւղի Դաւիթ քհնյ. Տէր Եղիազարեանին մեղադրում էր ինքնագլուխ վեցերորդ տասիճանի ազգակցական պսակ կատարելու մէջ։ Հրամայեցին. ի նկատի առնելով, որ Դաւիթ քհնյ. Եղիազարեանի կատարած պսակը ոչ թէ ազգակ-

ցական, այլ խնամէական վեցերորդ աստիճանի է. ուստի յանդիմանութիւն կարդալ Երևանի Կոնսիստորիային, որ շտապել է պատժել քհնային ինքնագլուխ՝ առանց օրինաւոր թոյլտուութեան։

Մարտ ամսի ընթացքում Սինոդը քահանայութեան արժանի համարեց և օրինաւոր թոյլտուութիւն տուաւ համար դիմեց նահանգապետներին հետևեալ անձանց համար.—

Աղէքսանդր Թարխանեանին՝ Շուշի քաղաքի համար (ճեմարանաւարտ), Ղազար Շահինեանցին՝ Աղէքսանդ. գաւառի Գիւլլի Բուլաղ գիւղի համար, Սրապիոն Տէր Մատթէոսեանին՝ Էջմիածնի գաւառի Ուզունօբա գիւղի համար, Մնացական Բաբայեանին՝ Նախիջևանի գաւառի Սուլթանբէկլու գիւղացի՝ Նոր Մաղրա գիւղի համար, Արսէն Տէր Պետրոսեանին՝ Զանգեզուրի գաւառի Տաթև գիւղի համար, Երուանդ Տէր Մխիթարեանին՝ Նոր Բայազիտու գաւառի Ղշլաղ գիւղի համար։

—⁂—